

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ ՂԱՐԱԲԱՂԻ ԱՆՑԵԱԼԻՑ.

Ժ. Զ. դարը Ղարաբաղի համար վերջանում է քաղաքական նոր վերիվարումներով ու տնտեսական տառնապնդումով*):

Ղարաբաղն այս ժամանակաշրջանում Օսմանցոյ տիրապետութեան տակ է անցնում. պարսից կառավարութիւնը չէր կարող հալտուել այդ դրութեան հետ. և մենք տեսնում ենք՝—կարճ ժամանակից յետոյ պարսից տիրապետութիւնը, յետոյ Օսմանցոյ, ապա Շահաբբասի օրով դարձեալ Պարսից: Այս անակնկալները չէին կարող ազդեցութիւն չանել ժողովրդի տնտեսական դրութեան վրայ: Յովհաննէս վարդապետ Մարեցին այս շրջանի համար ունի պարզ, հէքիաթի ոճով մի անպաճոյճ, բայց գնահատելի գլուխ, որը մենք գտնում ենք Դաւրիթեցու պատմութեան ՄԵ. գլխում: Դա 1579 թուի, ճիշտ Օսմանցոյ յարձակումների օրերին, տեղի ունեցած Ղարաբաղի աւերներն են ու մեծ սովը. Օսմանցիք Կովկասի լեռնականների հետ «բազում և անթիւ» հեծեալներով գալիս են Դամուր-դափի և ապա «յայս կոյս Կուր գետոյն», որ պիտի հասկանալ Աղուանքը. փախստական են անում Գեանջայի, Պարտաւի իշխաններին «և ինքեանք սփռեալ ընդ դաշտս և ընդ լեռինս զԳեանջայ և զՊարտաւ, զՃարաբերդ և զԽաչէն և զՎարանդայ և զԴիզակ, ի Չարեքի կոչեցեալ գետոյն (կայ և Չարեքայ վանք. այս մասին տեսնել ձեռագիր էջմիածնայ մատենադարանի Կար. թիւ 882 նոր 986 «Ճաշոց» ժամանակ՝ ՌՃԺԴ. յիշատակարան) մինչև ի գետն երասիս, ի միում աւուր յաւարի հարեալ գերեցին, զանհաճոյսն քրով սպանին և զկնի չորս և հինգ աւուրց դարձան ի տեղիս իւրեանց»:

«Չորս-հինգ աւուրց» այս հորդայական ասպատակութիւնները Ղարաբաղը ծայր աստիճան քայքայում են. Մարեցին պատմում է, որ Վարանդա, Դիզակ, Խաչէն անցել էին «Կարմրագլխոց» իշխանութեան ներքոյ. երկիրն աւեր էր և եթէ մնացել էր մի չինու-

*) Վանձասարի վանքի մի ձեռագիր աւետարանի (տես Խաչիկեան ցուցակ № 6) յիշատակարանից իմանում ենք, որ 1579 թ. երկրի քաղաքական պետը Շահ-Թափուս(զ)ն է, իսկ Վանձասարի կաթողիկոսը ՏԷ. Գրիգորիս. պետք է ասել, որ Աղուանից կաթողիկոսութեան շարքում (Շախաթ. Ստորգր. Բ.) չկայ այս կաթողիկոսի անունը. Բահաթրեանի անունով մնացած ձեռագրաց յիշատակարանում (թիւ 32 Խաչ. ց.) դարձեալ յիշուած է 1563 թ. ուրեմն աւելի վաղ. ես գտել եմ նաեւ էջմիածնի մատենադարանի Կար. թիւ 1889 ձեռագրի յիշատակարանում. ուրեմն անկասկած է այդ կաթողիկոսի գոյութիւնը:

թիւն՝ եկեղեցի, այնտեղ էլ ապաստանել էին «տնանկք և մերկք», որոնք չըջու՛մ էին օտարների դռները մի կտոր հաց մուրալու համար. կերակուր չկար. ուժեղները յարձակու՛մ էին փարախներում մնացած այս կամ այն մեծատան գառան, հորթի վրայ, փչրու՛մ կողերը, հանում սիրտը, փորոտիքը և հո՛ւմ ուտու՛մ իսկ աւելի թոյլերն անասունների աղըակոյտերն էին փորփորու՛մ հացահատիկներ գտնելու համար... ուտու՛մ էին «սուրբ և անսուրբ» կենդանիներ, այլ և մի փոքր և փոցի դնելով կաշեայ փոկ, մաշեալ տրեխ, խեցինի կտոր... սովը սաստկանում է մինչ այն աստիճան, որ կանայք, աղջկեք յարձակու՛մ են օրինակ մի մեծատան մանկան վրայ և ոտը քաշու՛մ ուտու՛մ... Ծարեցին մանրամասն պատմում է այդ ամենը, որպէս ականատես:

Ղարաբաղի ԺԶ-րդ դարը վերջանում է ժողովրդական այդ մեծ աղէտով, որի հասցրած վնասներն այնքան խոշոր և նշանակալից եղան, որ որոշ չափով խաղաղուելու և դարմանուելու համար շատ երկար տարիներ կպահանջէր. սակայն ԺԷ-րդ դարն էլ բացւում է նորանոր աղէտներով. առաջին տասնամեակի մասին մենք տեղեկութիւն չունենք. մի ձեռագրի յիշատակարան(տես Խ. ց. №27), որի գրիչը քահանայ է, մեզ տեղեկացնում է ժամանակի դրութեան հետ. դա Պարսից և ապա Վրացոց աւերներն է, որ կրում է Ղարաբաղը 1626 թուին: Ե... ՌՀԵ (1626 թ.) ի դառն և ի նեղ ժամանակիս սր ռա՛ս (=աշխարհս) իրբն ծով ալեկոծուէր... նորոգեցօ գիրս այն տարին որ աղգն Վրաց Մովրաւ ասին անուն նորա հեծելեաւք հասօ ի Գանձակ... յորժամ լուան (ղզլպաչք) գալն վրաց փախստական եղեն ի նմանէ և յանիրաւ աղգն վրաց արձակեցօ ի վերայ հայոց... ևս Վարդան } քահանայ... խիստ թալանուեցայ, ինչ մաւրէ մերկ... զամենայն ինչս իմ բազում գիրաւք և շատ անօթս եկեղեցոյ իմ գերի տարան և հայրս սպանին...

Այդպէս է պատմում ժամանակի ականատեսը այն յարձակումների վնասների մասին, որ Ղարաբաղը կրել է ոչ թէ պարսիկներից, այլ վրացիներից և որում ոչ այնքան մասնակցութիւն ունի Վրաստանը որպէս աղգութիւն, որքան նորա այս կամ այն զօրամասը, որ Պարսից երկրի խաղաղութիւնը պահպանելու նպատակով ներս եկած լինելով, ընդհակառակը պատճառ եղաւ նոր աղէտների:

Այսպէս Ղարաբաղի քաղաքական վիճակը նորանոր բարդութիւններով է զարգանում. մեկիքական — ֆէոդալական բաժան-բաժան ուժն անզօր էր դէմ դնալու այդ յարձակումներին. ի դուր չէ յաճախ գործ ածուած «ի դառն և ի նեղ ժամանակիս» դարձուածը, որ մենք համարեալ միշտ պատահում ենք, էջմիածնայ մատենադարանի կար. Թիւ 2062 «Բարոզգիրք» գրուած «յերկիրն Ծարայ» մեզ պատկերացնում է փոքր Սիւնիքը 1684 թ. ... «յորում նեղիմք

շանօրէն բռնաւորաց ծանր հարկապահանջութեանց մեծապէս տա-
ժանմամբ (աշխարհը տատանումների մէջ է) ընդ որս և մէք
կամք ըստ ծիանաց համանից ալեկոծութեանց վարեալ ի մըրկէ
անտի խոռովութեանց (տուժում են բոլորը) դիմօսական հարկօք
առւելութիւն և ոչ ո՞ւր սահման և կարգ ի յօրէնս դրաց և առջնոր-
դաց իւրնց այլ երկեծուցանելով սաստկապէս կեղեքեն զկեանս
անխնայապէս. Ը՞ յօրէնի չար տղրկաց անկուշտ և անյագ լինի՞վ»
. հարկերի ծանրութեան յիշատակութիւնը տնտեսական դրու-
թիւնից շատ քան է պարզում. Բաւական է ի նկատի առնել, որ
հարկահանութիւնը «օրէնքից և սահմանից» դուրս է:

Հարկերով ու կօռ-բեպեառներով ժողովրդին բոլորովին քա-
մում էին. հարկ էին առնում անգամ ուխտաւորներից. յիշուում է
օրինակ Երևանի խանը, որն ամեն մի ուխտաւորից մի ռակի էր
առնում: Ղարաբաղը ևս ճաշակում էր նմանօրինակ քաղաքակա-
նութեան դառնութիւնը: Հարկահանութեան եղանակն այս չրջա-
նում արդէն ինքնայատուկ է. յայտնի են Պարսից Շահ-Սուլթան
Հիւսէյնի հրամանով կատարած (Եսայի կաթ, պատմութ. Աղուա-
նից գլ. Գ.) աշխարհագիրն ու դրան հետևող անօրինակ հարկերը.
գալիս էին գիւղը, կանչում տէրտէրին և «հիւրընկալին» զոր գզիր
ասին» առանձնացնում էին, տարբեր սենեակներում փակում, ապա
առանձին-առանձին հարցնում գիւղի ծխերի թիւը և հասակը, և
եթէ քահանայի և գզիրի ասածների միջև տարբերութիւն լինէր և
իրար չհամապատասխանէր, այն ժամանակ կապում էին և «բրածն»
անում, առնում էին աւելի քան գրում էին: Հարկի տակ էին՝ վան-
քերը, անապատները, գիւղի եկեղեցիները (այս հաստատութիւն-
ներն ինչպէս դրանից առաջ, նոյնպէս և յետոյ ազատ են եղել հար-
կերից) եպիսկոպոսները, արեղանները, երէցները, վաճառականները,
ճանապարհորդները (դորս սուղ ինչ առևտրոյ տեսար էին, Շրջիկ
վաճառականութիւնն է): Հարկերի չափը մեծ էր. մեծ գիւղը տալիս
էր 150, 100 կամ 50 թուման, իսկ շատ փոքր գիւղերը 20 թու-
ման, որից ցածր չկար. այդպէս և վաճառականներից և արհեստա-
ւորներից, բացի այդ գլխաւոր հարկերից յիշատակուած են Ալի-
բուրան, Ղաղատի, Ախրաջաթ և Շէշդինար հարկերը:

Սրանք տնտեսական այնպիսի ծանրութիւններ էին, որոնց վե-
րացման և նոր կեանքի համար պէտք էր, որ ուղիներ հարթուէին.
Իսկ այդ աշխատանքը կատարւում էր: Դա հայկական ազատագրու-
թեան հարցն է, որ ծնունդ առաւ 1678 թ. Էջմիածնի ժողովից
յետոյ ու այնուհետև մի որոշ շրջանում կապուած մնաց Գանձասարի
կաթողիկոսների և Ղարաբաղի մելիքների դործառնութեանց հետ:

Աւուս Հախումեան.